Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2023թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի նրբանցքի հ.10(հանրակացարանային շենք), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (սպորտային մասնաշենք) և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/1 հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնել առկա բնակարանային ֆոնդից բնակարաններ, ինչպես նաև բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու միջոցով:
2. Սահմանել, որ մինչև 10.0քմ, 20.0քմ, 30.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին տրամադրվելու է համապատասխանաբար 25քմ, 35.0քմ, 45.0քմ մակերեսով բնակարանների համար նախատեսված գնման վկայագրեր՝ 1.0քմ մակերեսի համար սահմանելով 402.000 ՀՀ դրամ, 30.0-50.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին առկա բնակարանային ֆոնդից 2 սենյականոց, իսկ 50.0քմ և ավելի զբաղեցնողներին՝ 3 սենյականոց բնակարաններ:
3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համապատասխան որոշումների հիման վրա վերջիններիս հետ կնքել բնակարանների նվիրատվության, փոխանակության և/կամ/ բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու ստանալու մասին պայմանագրեր:
4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանների ձեռք բերման գործընթացն իրականացվում է ըստ կից հավելվածի, իսկ բնակարանների գնման վկայագրի միջոցով աջակցություն ստանալու դիմումի ձևը, հաշվառման գրանցամատյանի և պայմանագրերի ձևերը հաստատված են հավելվածի Ձև 1, 2, 3-ում:
5. Ընդունել ի գիտություն, որ բնակարանների գնման վկայագրերի միջոցով բնակարան ձեռք բերելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցները տրամադրվում են վերաբնակցվող ընտանիքների կողմից զբաղեցված բնակարանը Երևան համայնքին նվիրելու /հանձնելու/ պարագայում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<< ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքում քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 /հանրակացարանային մասնաշենք/, հ.10 /սպորտային մասնաշենք/, հ.10/1, հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերը գտնվում են փլուզման սպառնալիքի տակ, սակայն Երևան համայնքի տրամադրության տակ առկա բնակարանային ֆոնդը հնարավորություն չի ընձեռել ապահովել նշված շենքերի բնակիչների ամբողջական վերաբնակեցումը, ինչի պարագայում անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, բնակիչների մի մասին առաջարկվել է վերաբնակեցնել առկա բնակարանային ֆոնդից բնակարաններ տրամադրելու, իսկ մյուս մասին բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու միջոցով՝ համաձայն հավելվածի:

Վերաբնակեցման գործընթացի շրջանակում նախատեսվել է մինչև 10.0քմ, 20.0քմ, 30.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին տրամադրել համապատասխանաբար 25քմ, 35.0քմ, 45.0քմ մակերեսով բնակարանների համար նախատեսված գնման վկայագրեր՝ 1.0քմ մակերեսի համար սահմանելով 402.000 ՀՀ դրամ, իսկ 30.0-50.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին առկա բնակարանային ֆոնդից 2 սենյականոց, իսկ 50.0քմ և ավելի զբաղեցնողներին՝ 3 սենյականոց բնակարաններ՝ համաձայն հավելվածի:

Հարկ է նշել, որ բնակարանների 1քմ արժեքի համար հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 29.09.2022թ. հ.1521-Ն որոշմամբ սահմանված արժեքները, որը սահմանում է հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների վաճառքի կարգը, համաձայն որի 17-րդ կետի ա) ենթակետի՝ հիմնական պայմանագրով միավորի նախատեսվող գինը՝ ներքին հարդարմամբ բնակարանի 1 քմ-ի համար սահմանվել է 402,000 ՀՀ դրամ:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի հ.817-Ն որոշմամբ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեում ներգրավել են համապատասխան ֆինանսական միջոցներ նշված ծրագիրը իրականացնելու համար:

ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» 172-Ն որոշմամբ կարգավորվում են քանդման ենթակա վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ կապված իրավահարաբերությունները:

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված շենքերում բնակվող քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությանը, դեռևս բնակվում 4-րդ կարգի վթարային շենքերով, որոնք գտնվում են փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ընտանիքներին վերաբնակեցնել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջանալու ընդունել Երևան քաղաքի Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի - -ի
N Ա որոշման

Երևան քաղաքի վթարային շենքերի բնակարանների սեփականատերերին/օգտագործողներին/ բնակարան ձեռք բերելու համար բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու մասին

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Երևան քաղաքում առկա վթարային շենքերի բնակարանների սեփականատերերին /օգտագործողներին/ (այսուհետ՝ շահառու) բնակարան ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագրի (այսուհետ՝ վկայագիր) միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Վկայագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված ձևաթղթին համապատասխան կազմված անվանական փաստաթուղթ է, որը հավաստում է վկայագիր ստացած անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման համար անհատույց ֆինանսական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ստանալու իր իրավունքը:

3. Վկայագիրը պարունակում է հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

1) վկայագրի թողարկման սերիան (որը կազմվում է հասցեի և համապատասխան բնակարանը նկարագրող հապավումից, օրինակ՝ Ա4-7, և համարից (գրանցամատյանի հերթական համարը).

2) վկայագիրը տրամադրող մարմնի անվանումը, տրամադրման ամսաթիվը.

3) աջակցություն ստացող անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը անձնագրային տվյալները.

4) տրամադրվող աջակցության չափը.

5) վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման (առուվաճառքի պայմանագրի կնքման) ժամկետը:

4. Վկայագիրը տրամադրվում է կամավորության սկզբունքով: Այն արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագանձման ու այլ անձի փոխանցման:

5. Վկայագրում նշվող աջակցության գումարը բնակարանի նկատմամբ միանձնյա սեփականության իրավունքի գրանցման պարագայում՝ տվյալ անձի սեփականությունն է, իսկ ընդհանուր սեփականության իրավունքի գրանցման պարագայում՝ բոլոր մասնակիցների համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականությունը (հիմք ընդունելով վթարային բնակարանի նկատմամբ նրանց սեփականության իրավունքի տեսակը և մասը),

որի չափով ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը ձեռք բերվող բնակարանի նկատմամբ:

6. Վկայագիրը տրամադրվում է մեկ օրինակից:

7. Վկայագրի կորստի դեպքում, վկայագիր ստացած անձի դիմումի հիման վրա, կորցրած վկայագիրը սահմանված կարգով անվավեր է ճանաչվում, և դրա փոխարեն այդ անձին տրամադրվում է նոր վկայագիր:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո շահառուի մահվան դեպքում, սեփականության պարագայում՝ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան բացվում է ժառանգություն, իսկ օգտագործողի դեպքում վերջինիս իրավունքը դադարում է:

9. Վկայագրի միջոցով աջակցությունը ցուցաբերվում է վճարումների ձևով, Երևանի քաղաքապետարանի և շահառուների միջև՝ սահմանված կարգով՝ վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին կնքված պայմանագրի հիման վրա՝ բնակարանի արժեքը (բայց ոչ ավելի, քան վկայագրում նշված աջակցության չափը) վճարելով բնակարան (բնակելի տուն) վաճառողին՝ նրա կողմից ներկայացված հաշվեհամարին փոխանցելու միջոցով, իսկ վկայագրում ամրագրված աջակցության չափից ցածր արժողությամբ բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը փոխանցվում է շահառուին՝ նրա կողմից ներկայացված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

10. Վկայագրի միջոցով ձեռք բերված բնակարանը (բնակելի տունը) սեփականության իրավունքի գրանցման պահից հաշված՝ 2 տարվա ընթացքում չի կարող վաճառվել, նվիրվել, գրավ դրվել (բացառությամբ այն դեպքերի, երբ վկայագիր ստացողը վկայագրով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ներգրավում է հիփոթեքային վարկի միջոցներ կամ օտարվել այլ եղանակով:

II. ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունը՝ սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց ծանուցում է վկայագրի միջոցով աջակցություն ստանալու մասին:

12. Ծանուցումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ վկայագրի միջոցով աջակցություն ստանալու ցանկություն հայտնած անձինք Երևանի քաղաքապետարան են ներկայացնում դիմում (ձև N 1)՝ դրան կցելով՝

1) բնակարանի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ,

2) շահառուների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները (մահացած շահառուի ժառանգների կողմից՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունելու փաստը հաստատող փաստաթղթի պատճենը).

3) հայտարարություն՝ աջակցություն ստանալուց հետո քանդված բնակարանի դիմաց պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին բնակարանային պահանջ չներկայացնելու, տվյալ շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան բաժնեմասից կամովին հրաժարվելու և վթարային բնակարանը Երևան համայնքին նվիրելու / հանձնելու/ մասին. (ձև N 2)՝

13. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունը դիմումներն ստանալուց հետո ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում ծանուցում է նրանց՝ առաջարկելով Երևան քաղաքապետարանի հետ կնքել պայմանագիր՝ վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին:

14. Սահմանված ժամկետում վկայագրի միջոցով աջակցություն ստանալու մասին գրավոր ցանկություն չհայտնած անձինք համարվում են աջակցություն ստանալուց հրաժարվածներ:

15. Ծանուցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում շահառուները Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի հետ կնքում են վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին պայմանագիր (ձև N 3) և կնքված պայմանագրի հիման վրա՝ ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում, շահառուին տրամադրվում է վկայագիր:

III. ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

16. Վկայագիր ստացած անձը սահմանված ժամկետում բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկի միջոցներ ներգրավելու ցանկություն հայտնելու դեպքում դիմում է Երևանի քաղաքապետարան՝ իր դիմումի համաձայն հիփոթեքային վարկի տրամադրման հարցի քննարկման խնդրանքով:

17. Երևանի քաղաքապետարանը վկայագիր ստացած անձի դիմումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում դիմողի կողմից ընտրված բանկին է ներկայացնում ստացված դիմումը և միջնորդագիր-գրություն վկայագրում նշված աջակցության չափը որպես կանխավճար վաճառողի բանկային հաշվին փոխանցելու վերաբերյալ՝ բանկի կողմից դիմողին վարկ տրամադրելու մասին ընդունված որոշման հիման վրա անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիր կնքելու դեպքում:

18. Բանկը Երևանի քաղաքապետարանի միջնորդությունը ստանալով, սահմանված կարգով ուսումնասիրում է դիմողի վճարունակության պայմանների համապատասխանությունը բանկի պահանջներին և ուսումնասիրության արդյունքները դրական լինելու դեպքում գրավոր տեղեկացնում է Երևանի քաղաքապետարանին և դիմողին՝ վարկ տրամադրելու ընդունված որոշման մասին, իսկ ուսումնասիրության արդյունքները բացասական լինելու դեպքում տեղեկացնում է վարկի տրամադրման մերժման վերաբերյալ:

19. Վկայագիր ստացած անձը բանկի կողմից ընդունված դրական որոշման հիման վրա կնքված անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրերի բնօրինակները երկօրյա ժամկետում ներկայացնում է Երևանի քաղաքապետարան՝ նշելով բանկային վավերապայմանները: Համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված վճարման հայտի համաձայն, նոտարի դեպոզիտ հաշվից նոտարի միջոցով, պայմանագրերում նշված հաշվեհամարին է փոխանցում վարկառուի վկայագրում նշված աջակցության չափին համապատասխանող գումարը:

<u>Ձև N 1</u>
Երևանի քաղաքապետ

_____
(անունը, ազգանունը)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտնում եմ Ձեզ, որ Երևան քաղաքի ---------- .... բնակարանի/սենյակի/ սեփականատեր/ օգտագործող/ եմ:

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)
_____
(հաշվառման հասցեն)
_____
_____
_____
_____
(համասեփականատերերի անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման հասցեն)

2. Խնդրում եմ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ինձ տրամադրել ֆինանսական աջակցություն՝ բնակարանի գնման վկայագրի միջոցով:
3. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝
_____
_____
_____
_____
_____

Դիմող՝ _____ ___ _____ 20 թ.
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Համասեփականատերեր՝ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)
_____
_____

Ձև N 2

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում եմ Ձեզ, որ Երևան քաղաքի ---------- բնակարանի/սենյակի/ սեփականատեր/ օգտագործող/ եմ:

_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(հաշվառման հասցեն)

և պատրաստ եմ կամովին հրաժարվելու իմ վթարային բնակարանից և տվյալ շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան բաժնեմասից և դրա դիմաց ստանալ ֆինանսական աջակցություն՝ բնակարանի գնման վկայագիր ստանալու միջոցով, որի դիմաց պարտավորվում եմ ազատել սեփականության /օգտագործման/ իրավունքով ինձ պատկանող/ տրամադրված/ վթարային բնակարանը և այն նվիրել /հանձնել/ Երևան համայնքին:

Միաժամանակ պարտավորվում եմ բնակարանային պահանջ չներկայացնել պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին քանդված բնակարանի դիմաց:

ԴԻՄՈՂ՝

Ձև N 3

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N _____

ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան ___ _____20 թ.

Երևանի քաղաքապետը՝ ի դեմս աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի _____-ի՝ (անունը, հայրանունը, ազգանունը) մի կողմից, և

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ---------- բնակարանի /սենյակի/ սեփականատեր / օգտագործող/

_____ը
(անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

Համասեփականատերեր
_____
(անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

_____
_____
_____

(այսուհետ՝ շահառու)՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Երևանի քաղաքապետարանը՝ Երևան քաղաքի ավագանու ---------- որոշման հիման վրա՝ բնակարանի գնման վկայագրի միջոցով շահառուին տրամադրում է անհատույց ֆինանսական աջակցություն՝

_____ դրամ:(գումարի չափը՝ թվերով և բառերով)

1.2. Վկայագրում նշվող աջակցության գումարը վթարային բնակարանի նկատմամբ միանձնյա սեփականության իրավունքի գրանցման պարագայում՝ տվյալ անձի սեփականությունն է, իսկ ընդհանուր սեփականության իրավունքի գրանցման պարագայում՝ բոլոր մասնակիցների համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականությունը (հիմք ընդունելով վթարային բնակարանի նկատմամբ նրանց սեփականության իրավունքի տեսակը և մասը), որի չափով ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը՝ ձեռք բերվող բնակարանի նկատմամբ:

1.3. Աջակցության տրամադրումը հիմք է շենքում շահառուներին սեփականության (համատեղ սեփականության) իրավունքով պատկանող գույքի՝ բնակարանի, ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի բաժնեմասի նկատմամբ կատարված իրավունքների պետական գրանցումները դադարեցնելու համար:

1.4. Աջակցության միջոցով բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագրերի նոտարական վավերացման և այդ պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են աջակցություն ստացող շահառուների միջոցների հաշվին:

1.5. Շահառուն պարտավորվում է աջակցությունն ստանալուց հետո քանդված բնակարանի դիմաց բնակարանային պահանջ չներկայացնել պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին:

1.6. Շահառուն պարտավորվում է աջակցությունն ստանալուց հետո պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունք ծագելու դեպքում այդ իրավունքը զիջել Հայաստանի Հանրապետությանը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Երևանի քաղաքապետարանը պարտավոր է՝

2.1.1. շահառուին տրամադրել բնակարանի գնման վկայագիր.

2.1.2. շահառուի կողմից բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի նոտարական կարգով վավերացված պայմանագիրը (առանձին դեպքերում՝ նաև հիփոթեքի պայմանագիրը) Երևանի քաղաքապետարան ներկայացնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել Երևան քաղաքի ավագանու սույն որոշման հ.1 հավելվածում նախատեսված վճարումները:

2.3. Շահառուն պարտավոր է՝

2.3.1. բնակարանի գնման վկայագիրն ստանալուց հետո 6 ամսվա ընթացքում կնքել բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագիր և այն ներկայացնել Երևանի քաղաքապետարան, իսկ այդ ժամկետի ընթացքում բնակարան (բնակելի տուն) չգնելու

դեպքում՝ ժամկետի ավարտից հետո բնակարանի գնման մարված վկայագիրը վերադարձնել Երևանի քաղաքապետարան.

2.3.2 իր միջոցներով կատարել աջակցության միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման (առուվաճառքի) պայմանագրերի նոտարական վավերացման և այդ պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը.

2.3.4. սույն պայմանագրով սահմանված գումարից ավելի բարձր գին ունեցող բնակարան ձեռք բերելու դեպքում գնի տարբերությունը լրացնել իր միջոցների հաշվին:

3. Վեճերի լուծումը և պայմանագրի կնքումը

3.1. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ դատական կարգով:

4. Եզրափակիչ և այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու օրվանից:

4.2. Սույն պայմանագրի համաձայն շահառուին տրամադրված բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու (առուվաճառքի պայմանագիր կնքելու) ժամկետը սահմանվում է 6 ամիս՝ առանց ժամկետի երկարաձգման հնարավորության՝ բացառությամբ

4.3. Սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում բնակարան (բնակելի տուն) չգնելու դեպքում բնակարանի գնման վկայագիրը մարվում է, և սույն պայմանագիրը համարվում է լուծված:

4.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն, երկու օրինակից՝ մեկական բնօրինակ յուրաքանչյուր կողմի համար, որոնք ունեն միատեսակ իրավաբանական ուժ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները, ստորագրությունները: